

ՓՈՔՐԵՐԻ ՀԱՍԱՐ

ԱՐՋՆ ՈՒ ԱՂՋԻԿԸ



ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԼԿ ԻԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ

1938

Թուսական ժողովրդական հեքիաթ



Լինում է, չի լինում, մի պատաժ մարդ ա-
կին է լինում: Նրանք ունենում են մի աղջիկ,
անունը Մաշա:

Մի անգամ Մաշայի ընկերուհիներն յեկան,
թե գնանք անտառ, պտուղ հավաքենք: Մաշայի



ծնողները համաձայնվեցին, վոր աղջիկը գնա, բայց պատվիրեցին, վոր ընկերուհիներից հետ չմնա: Յերբ նրանք անտառ հասան, սկսեցին պտուղ հավաքել: Մաշան մտավ մի թփի հետև և հետ մնաց ընկերուհիներից: Անտառով գնաց— գնաց, ավելի մոլորվեց: Մոտեցավ անտառային խրճիթին և դուռը ծեծեց: Պատասխանող չեղավ: Չեղբ տվեց դռանը թե չե՝ դուռը բացվեց: Ներս մտավ, ավթոռին նստեց:

Այդ խրճիթում մի արջ էր ապրում, սակայն այդ բոլորին

Յերբ արջը յերեկոյան վերադարձավ, աղջկանը տեսնելով շատ ուրախացավ:

—Մըանից հետո,—ասաց,—քեզ ել բաց չեմ թողնի, դու պիտի ինձ մոտ մնաս:

Մաշան լաց յեղավ, բայց ճարն ինչ. մնաց արջի մոտ, անտառային խրճիթում:



1-37669p

Այլն ամբողջ որով անտառ եր գնում: Հե-
ռանալիս Մաշային պատվիրում եր, վոր առանց
իր թուղթովության վոչ մի տեղ չգնա:

— Իսկ յեթե փախչես,—ասում եր նա,—
միննույն ե, կրոնեմ ու աշն ժամանակ քեզ կու-
տես:

Մաշան սկսեց մտածել. թե ի՞նչ անի, վոր ար-
չիցն աղատվի: Շատ վոր մտածեց, հնարը գտավ:

— Արջ ախպեր,—ասաց նա,—յես վոր կար-
կանդակ թխեմ, կտանեմ մեր գյուղը, կնվիրեմ
իմ հայրիկին ու մայրիկին:

Արջը պատասխանեց.

— Իհարկե կտանես:

Մաշան ուրախացած կարկանդակ թխեց, ճա-
րեց մի մեծ կողով և արջին ասաց.



— Այ, այս կողովի մեջ յես կարկանդակ
կղնեմ, վոր տանես, միայն տես, չլինի թե ու-
տես: Յես կտուրը կբարձրանամ, կհետևեմ քեզ:



Հենց վոր արջը վտարը խրճիթից դուրս գրեց,
Մաշան իսկույն մտավ կողովի մեջ, կարկանդակ-
ներով ծածկվեց: Արջը վերադարձավ, տեսավ, վոր
կողովը պատրաստ է, շալակեց, ճանապարհ ընկավ:

Յերբ հոգնեց, ասաց.

— Այս կոճղին նստեմ,

Կարկանդակ ուտեմ:

Այդ բոպելին Մաշան կողովի միջից կանչեց.

— Տեսնո՞ւմ եմ, տեսնո՞ւմ, կոճղին չնստես,
կարկանդակ չուտես:




Արջը հետ նայեց, ասաց.

— Այ, թե խորամանկն ե յեղե՛լ, բարձր
տեղ նստու՞մ, հեռու՞ն ե տեսնու՞մ:

Ու կողովը վերցնելով առաջ անցավ,
Մի քիչ ել վոր գնաց, ելի ասաց.

— Այս կոճղին նստեմ,
 Կարկանդակ ուտեմ:
 Իսկ Մաշան կոզովի միջից դարձաւ ձայն
 ավելց.




— Տեսնում եմ, տեսնում, կոճղին չնստես,
 կարկանդակ չուտես:
 Արջն այդ լսելով, վախեցավ:
 — Այսպէս ել խորամանկ աղջիկ. բարձր
 տեղ նստում, հեռուն ե տեսնում:
 Ու վեր կացավ, շտապ հեռացավ:
 Յերբ հասավ դյուղը, ծեծեց Մաշալի ծնող-
 ների տան դուռը:

— Թը'խկ, թը'խկ, թը'խկ. բաց արեք, բաց արեք, Մաշալից ձեզ համար կարկանդակ եմ բերել:

Շնեքն արջի հոտն զգալով, խակույն վրա տալին. արջը վախից կողովը գցեց դռան մոտ ու անտառ փախավ: Ծերուկն ու սլառավը դուրս



յեկան, կողովի բերանը բացին ու ինչ տեսան. Մաշան նստած կողովում, ծիծաղում է, ծիծաղում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0937894

10 ДЕК 1938

ԴԻՆԸ 50 ԿՈՊԵԿ

1
3766

Թարգմ Շ. Մանգոյան
Պատ. խմբագիր՝ Լ. Թարգյուշ
Նկարները՝ Յ. Ռեշեանյանի
Տեխ. խմբագիր՝ Ան. Դատչարյան
Արտատպիչ՝ Ա. Մ. Ղարանյան

МЕДВЕДЬ И ДЕВОЧКА

Армгиз Ереван. 1938

Գրավոր լիազոր՝ Դ-3729 Հ. առ. 4638.

Պատվեր 510. Տիրած 4000.

Գետնաթի 1 տպարան, Յերեվան, Լենինի 66